

ՄԵԴԻԱ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Մեդիայի հարգելի ղեկավարներ, ներկայացուցիչներ:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան պատրաստել է ՄԵԴԻԱ ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ նպատակ ունենալով Մեդիայի ներկայացուցիչներին ծանոթացնել ֆուտբոլային մարքետինգում, հասարակայնության հետ հարաբերություններում միջազգայնորեն ընդունված այն հիմնական կանոններին, որոնք բխում են ֆուտբոլ խաղի կանոնակարգման ելակետերից, Իրավատեր և Ոչ իրավատեր հեռարձակողների, հեռուստատեսային և ռադիո ընկերությունների, տպագիր մամուլի, ինտերնետ ռեսուրսների, ֆոտոձառայություններ մատուցող Մեդիայի, տեսաբովանդակություն պարունակող Մեդիա միջոցների և ֆուտբոլ խաղի կազմակերպիչների ու կողմերի փոխհարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունից:

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքական թիմերի յուրաքանչյուր հանդիպում, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հավատարմագրում պահանջող յուրաքանչյուր միջոցառում պատշաճ լուսաբանելու համար Մեդիայի ներկայացուցիչները պետք է ծանոթ լինեն այն հիմնական կանոններին, որոնք կարգավորում են վերընշյալ փոխհարաբերությունները:

ՄԵԴԻԱ ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ հատկապես կարևոր տեղ է հատկացված ԵՎՐՈ-2016-ի ընտրական փուլի հանդիպումների լուսաբանման կանոններին, Մեդիայի ներկայացուցիչների, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի՝ որպես Եվրո-2016-ի ընտրական փուլի Հայաստանի հանդիպումների կազմակերպչի իրավունքներին և պարտականություններին:

ՄԵԴԻԱ ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ Մեդիա հասկացության ներքո նկատի են առնված Իրավատեր և Ոչ իրավատեր հեռարձակողները, հեռուստատեսային և ռադիո ընկերությունները, տպագիր մամուլը, ինտերնետ ռեսուրսները, ֆոտոձառայություններ մատուցող Մեդիան, տեսաբովանդակություն պարունակող Մեդիա միջոցները:

Խնդրում ենք Մեդիայի ղեկավարներին և ներկայացուցիչներին՝ հանգամանորեն ծանոթանալ ՄԵԴԻԱ ՈՒՂԵՑՈՒՅՑԻՆ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀՖՖ մամուլի քարտուղարություն

ՄԵԴԻԱ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան Մեդիայի ներկայացուցիչների համար ապահովում է.

ՄԵԴԻԱ ՏՐԻԲՈՒՆԱ

Մարզադաշտի տրիբունաների առանձին և անվտանգ հատվածում ծածկով աշխատանքային տարածք՝ նստատեղերով, նոթբուքերի համար նախատեսված աշխատանքային սեղաններով, էլեկտրաէներգիայի առանձին վարդակներով, ինտերնետ կապով:

ՄԱՍՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՄՆԵՐԻ ՄՐԱՀ

Աշխատանքային սեղաններով, աթոռներով, ինտերնետ կապով, հեռուստատեսային տեսախցիկների համար առանձնացված հատուկ հարթակով, լուսավորությամբ, ձայնային համակարգով կահավորված տարածք, որն ունի մարզիչների, ֆուտբոլիստների և Մեդիայի ներկայացուցիչների համար նախատեսված առանձին մուտքեր և գտնվում է Մեդիայի ներկայացուցիչների համար դեպի Մարզադաշտ առանձնացված մուտքի հարևանությամբ:

ՄԵԴԻԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄՐԱՀ

Սեղաններով, աթոռներով, ինտերնետ կապով, հեռուստացույցով, կանանց և տղամարդկանց համար առանձնացված սան հանգույցներով կահավորված տարածք՝ քեյթերինգ ծառայությամբ՝ Մեդիայի ներկայացուցիչների աշխատանքային գործունեությունն ապահովելու համար:

ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԽՑԻԿՆԵՐ

Ոչ իրավատեր հեռարձակողների և ֆոտոթղթակիցների համար հատուկ պահախցիկներով առանձնացված տարածք:

ԽԱՌԸ ԳՈՏԻ

Մեդիայի ներկայացուցիչների, այդ թվում և Ոչ իրավատեր հեռարձակողների համար նախատեսված աշխատանքային տարածք՝ ֆուտբոլիստների և Մեդիայի ներկայացուցիչների միջև հատուկ արգելապատնեշներով առանձնացված:

ՖՈՏՈԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՏԻ

Մարզադաշտի հատուկ գոտիներում առանձնացված տարածք:

ՄԵՂԻԱՅԻ ԱՆՏՐԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մարզադաշտում, ֆուտբոլային գոտում կարող են աշխատել ՄԻԱՅԻ ՀՖՖ ԱՌՑԱՆՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՐԹԱԿԻ միջոցով հավատարմագրում անցած և ՀԱՏՈՒԿ ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ ստացած Մեղիայի ներկայացուցիչները:

ԱՌՑԱՆՑ հավատարմագրում անցած Մեղիայի ներկայացուցիչներն իրենց ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԸ պետք է ստանան Մարզադաշտի Չարենցի փողոցի մուտքի մոտ՝ հատուկ այդ նպատակով առանձնացված վայրից, անձը հաստատող փաստաթղթերով: (Անձնագիր, վարորդական իրավունքի վկայական, ID քարտ, զին գրքույկ): Լրագրողական վկայականը չի համարվում անձը հաստատող փաստաթուղթ:

Առանց անձը հաստատող փաստաթղթի, կամ այլ փաստաթղթով ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐԸ որևէ կերպ չի կարող հանձնվել Մեղիայի ներկայացուցչին: Այդ պարագայում հանդիպմանը չմասնակցելու պատասխանատվությունը կրում է Մեղիայի ներկայացուցիչը:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԸ ունեն համապատասխան աշխատանքային գոտիների մասին նշումներ: Մեղիայի ներկայացուցիչները պարտավոր են ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԸ սահմանված ձևով կրել այն ստանալուց անմիջապես հետո, Մարզադաշտում, ֆուտբոլային գոտում գտնվելու ամբողջ ընթացքում:

Մեղիայի ներկայացուցիչները մարզադաշտ են մտնում հատուկ իրենց համար առանձնացված մուտքով, նախապես կարգադրիչի կողմից ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԻ ստուգումից հետո:

Մեղիայի հավատարմագրված ներկայացուցիչներն իրավունք ունեն լինելու միայն իրենց ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ վրա նշված գոտիներում:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողները պարտավոր են հարգել միջոցառման մասնակիցների, կողմերի, ՀՖՖ-ի, բոլոր ներկաների իրավունքները, շահերը, հեղինակությունը:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ Մեղիայի ներկայացուցիչները պարտավոր են մարզադաշտ գալ հանդիպման սկզբից ոչ ուշ, քան 2 ժամ առաջ:

Մեդիայի ղեկավարներին և գլխավոր խմբագիրներին խնդրում ենք պլանավորելիս հաշվի առնել, որ միջազգայնորեն ընդունված կարգերի խախտումները կարող են հանգեցնել լուրջ սանկցիաների:

ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Հավատարմագրված ոչ ԻՐԱՎԱՏԵՐ հեռուստաօպերատորները և ինտերնետ ռեսուրսի օպերատորները մարզադաշտի տարածք մուտք գործելուց հետո պարտադիր պետք է ներկայանան Մեդիայի աշխատանքային սրահ:

Մարզադաշտում, ֆուտբոլային գոտում, տրիբունաներում նկարահանումներ կարող են իրականացնել ՄԻԱՅՆ Պաշտոնական հեռարձակողի ներկայացուցիչները՝ ԻՐԱՎԱՏԵՐԵՐԸ:

Ոչ ԻՐԱՎԱՏԵՐ հեռուստաընկերությունները, տեսաբովանդակություն (video content) կրող այլ Մեդիա միջոցները նկարահանումներ կարող են իրականացնել ՄԻԱՅՆ Խառը գոտում և ՄԻԱՅՆ Մամուլի ասուլիսների սրահում:

-Մեդիայի ներկայացուցիչներին արգելվում է իրենց համար սահմանված գոտիներից որեւէ այլ միջոցով՝ (web տեսախցիկ, բջջային հեռախոս, ոչ պրոֆեսիոնալ և/կամ պրոֆեսիոնալ տեսախցիկ եւ այլն), որեւէ կետից իրականացնել որեւէ տեսանկարահանում, ինչպես նաեւ օգտագործել երրորդ անձի կողմից կատարված տեսանկարահանումներ:

Հանդիպումից առաջ Ոչ ԻՐԱՎԱՏԵՐ հեռուստաընկերությունների, լրատվական գործակալությունների, ինտերնետ ռեսուրսների, տեսաբովանդակություն (video content) կրող այլ Մեդիա միջոցների տեսախցիկները պետք է հանձնվեն մարզադաշտի հատուկ պահախցիկներով առանձնացված տարածք:

ՀՖՖ-ն պատասխանատու է տեսախցիկների և սարքավորումների պահպանության և անվտանգության համար: Տեսախցիկները և սարքավորումները հանձնող պատասխանատու անձիք պատասխանատու են պահախցիկների բանալիների պահպանության համար:

Մեդիայի ներկայացուցիչներին արգելվում է որևէ կրիչով ինտերնետային ուղիղ հեռարձակում իրականացնելը: Ինտերնետային ուղիղ հեռարձակման իրավունքը պատկանում է ՀՖՖ-ին և Պաշտոնական հեռարձակողին:

Մամուլի ասուլիսների սրահում հեռուստատեսային տեսախցիկների համար նախատեսված հատուկ հարթակի կենտրոնական տեղերը պատկանում են Պաշտոնական հեռարձակող ընկերությանը:

Ֆուտբոլիստները խառը գոտում հարցազրույց տալու իրավունքից օգտվում են ըստ իրենց հայեցողության:

Մամուլի ասուլիսների սրահում և Խառը գոտում առաջին հարցի իրավունքը պատկանում է Պաշտոնական հեռարձակողին, եթե այդպիսին կա:

Ֆլեշ /Flash/ հարցազրույց՝ հատուկ այդ նպատակով հատկացված տեղում անելու Բացառիկ իրավունքը պատկանում է Պաշտոնական հեռարձակողին:

Ֆլեշ /Flash/ հարցազրույցը կարող է տևել մինչև 90 վայրկյան, որին կարող է մասնակցել միայն գլխավոր մարզիչը եւ/կամ 1 ֆուտբոլիստ:

ՖՈՏՈՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Հավատարմագրված ֆոտոթղթակիցները Մարգարաշտի տարածք մուտք գործելուց հետո պարտադիր պետք է ներկայանան Մեդիայի աշխատանքային սրահ: Ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ, ֆոտոթղթակիցները պարտավոր են ստանալ ժիլետներ, որոնք ենթակա են վերադարձման խաղի ավարտից հետո:

Ֆոտոթղթակիցները պատասխանատվություն են կրում ժիլետների անվնաս պահպանության համար: Դրանք կորցնելու կամ վնասելու դեպքում դրանց արժեքը ենթակա է փոխհատուցման:

Ֆոտոթղթակիցները համապատասխան ժիլետը պարտավոր են կրել հանդիպման ողջ ընթացքում, մամուլի ասուլիսների և Մեդիայի աշխատանքային տարածքներում՝ ցանկացած եղանակի եւ ցանկացած հագուստի վրայից:

Ֆոտոթղթակիցները կարող են օգտվել հատուկ պահախցիկներից՝ իրենց սարքավորումները պահպանելու համար:

Ֆոտոթղթակիցները խաղադաշտում սահմանված գոտիներ կարող են դուրս գալ ՄԻԱՅՆ ժիլետներով:

Խաղի ընթացքում լուսանկարել կարելի է ՄԻԱՅՆ ՆՍՏԱԾ և ֆոտոթղթակիցների համար Մարգարաշտի հատուկ գոտիներում առանձնացված տարածքներում, որտեղ պարտավոր են դիրքավորվել հատուկ աթոռակները և ժիլետները ստանալուց անմիջապես հետո:

Հանդիպման սկզբից 10 րոպե առաջ ֆոտոթղթակիցները կարող են գնալ խաղաղաշտի եզրային գծի մոտ նախատեսված գոտի, որտեղ թիմերը կանգնում են պետական օրհներեզերի հնչեցման ժամանակ՝ պաշտոնական լուսանկար անելու նպատակով:

Մրցավարի կողմից կատարվող գնդակի եւ դարպասի վիճակահանությունից հետո, ֆոտոթղթակիցները պարտավոր են **արագորեն** զբաղեցնել իրենց հատկացված տեղերը: **Արգելվում է** մնալ տվյալ գոտում՝ մարզչական շտաբին կամ ֆուտբոլիստներին լուսանկարելու նպատակով:

Հանդիպման մեկնարկից սկսած, ֆոտոլրագրողներն իրավունք չունեն լքել իրենց զբաղեցրած գոտիները մինչև հանդիպման ընդմիջումը:

Ֆոտոթղթակիցներն իրավունք ունեն փոխել իրենց տեղը գոտում միայն ընդմիջմանը, երբ բոլոր ֆուտբոլիստները կլքեն խաղաղաշտը:

Ֆոտոթղթակիցներին **արգելվում է** օգտագործել լրացուցիչ լուսավորող սարքեր / Flash եւ այլն/ : Թույլատրվում է միայն մինի եռոտանիների և մոնոպոդների օգտագործումը:

Ֆոտոթղթակիցներին չի թույլատրվում աշխատել գովազդային վահանակների առջևում եւ չի թույլատրվում որևէ այլ կերպ խոչնդոտել գովազդային վահանակների տեսանելիությանը:

Ֆոտոթղթակիցներին չի թույլատրվում աշխատել հեռուստախցիկների համար նախատեսված տարածքներում:

Ֆոտոթղթակիցները կարող են տեղադրել հեռակառավարվող ֆոտոխցիկը խաղասկզբից ոչ ուշ, քան 10 րոպե առաջ՝ դարպասի և գովազդային վահանակների մեջտեղում, բայց այնպես, որ այն չխանգարի թե դարպասին, թե գովազդային վահանակներին /դարպասի ետևի գծին ոչ մոտիկ, քան 50 սմ հեռավորության վրա/: Հեռակառավարվող ֆոտոխցիկները, անկախ հանգամանքներից, կարող են սպասարկվել միայն ընդմիջման ժամանակ:

Հանդիպման ավարտին բոլոր ֆոտոթղթակիցները պետք է մնան իրենց տեղերում՝ մինչև բոլոր ֆուտբոլիստները կլքեն խաղաղաշտը:

Հանդիպման մեկնարկին, ընդմիջմանը եւ ավարտից հետո ֆոտոթղթակիցներին արգելվում է մտնել խաղաղաշտ եւ թիմերի հանդերձարան, թեկուզ պաշտոնյաների կամ ֆուտբոլիստների հրավերով:

Մամուլի ասուլիսների սրահում ֆոտոթղթակիցներն իրավունք ունեն մինչև մամուլի ասուլիսը սկսելը կատարել մինչև 3 րոպե տեւողությամբ արարողակարգային լուսանկարահանում, որից հետո պարտավոր են դադարեցնել լուսանկարահանումը եւ այն շարունակել միայն **արագորեն** սրահի վերջնամաս տեղափոխվելուց հետո:

Ֆոտոթղթակիցները իրավունք չունեն կատարել նկարահանումներ մամուլի ասուլիսների սենյակում հանդիպման ավարտից հետո:

Բոլոր լուսանկարները, որ արվում են հավատարմագրված ֆոտոթղթակիցների կողմից, պետք է օգտագործվեն բացառապես խմբագրական նպատակներով եւ ոչ կոմերցիոն կամ այլ նպատակներով: